ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/33

ք. Երևան «27» 03 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սամվել Ադամյան Բաթի» Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Սամվել Ադամյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 (տաս)** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 19560000 (տասնինը միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	<<Սամվել Ադամյան Բաթի>> Ա/Ձ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Ք.Աբովյան, Հանրապետության փ. շ.1/6, 13բն.
Կառավարական տուն 2,	ՀՎՀՀ 43006473
ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 2052832268971001
ՀՀ ֆինանսների նախարարության	Բանկ՝<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
գործառնական վարչություն	samvel.adamyan1977@mail.ru
Հ/Հ 900011032589	

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

_____ Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

_____ Ս.Ադամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«27» 03 2020 թ. կնքված
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/33 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման ժամկետը
1	92621110-1	սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	**Ծառայությունը նախատեսում է «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) անցկացում:** **Մրցույթն իրականացվում է համաձայն կից ներկայացվող ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հունվարի 23-ի № 53-Ա/2 հրամանով հաստատված կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ):** **Մրցույթի անցկացման աշխատանքները համակարգում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):** **Մրցույթն անցկացվելու է հետևյալ փուլերով.** **1. համայնքային փուլ,** **2. մարզային փուլ,** **3. եզրափակիչ փուլ:** **Մրցույթի փուլերի անցկացումը նախատեսվում է իրականացնել ներքոնշված չափանիշներին* համապատասխան:**	դրամ	19560000	1	20.04.2020թ-ից սկսած, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում մինչև 23.06.2020թ

<u>*Միջոցառման փուլերի անցկացման չափանիշներ</u>

1. <u>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՒԼ</u>

Համայնքային փուլը անցկացվելու է 2020 թվականի ապրիլի 20-ից մայիսի 10-ը՝ բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում՝ 10 օրացուցային օր տևողությամբ (միջոցառման օրը համաձայնեցնել Վարչության հետ) Հայաստանի Հանրապետության 40 համայնքներում, Երևան քաղաքի 9 վարչական շրջաններում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում (ընդհանուր քանակը՝ 50 համայնք):

Ծառայությունը մատուցող կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող) համապատասխան գույքը, վկայագրերը (հավաստագիր), մրցավարների սնունդը պետք է ապահովի (համաձայն Վարչության կողմից տրված ցուցակի և ժամանակացույցի) << 40 համայնքներում, Երևան քաղաքի 9 վարչական շրջաններում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում:
Մրցույթի Կանոնակարգի պահանջների համաձայն համապատասխան ցուցակը և ժամանակացույցը Վարչության կողմից Կատարողին է տրամադրվում Մրցույթը սկսելուց ոչ ուշ քան 5 օր առաջ:
Կատարողը կազմում է մրցանակների և գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում դառնում են հանձնման-ընդունման ակտի անբաժանելի մասը:
Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնեցնելով Վարչության հետ:

Համայնքային փուլի անցկացման համար անհրաժեշտ է հետևյալը՝

1) Համայնքային փուլի ընթացքում մրցավարական հանձնաժողովներին տրամադրվում է սնունդ:
Յուրաքանչյուր համայնքում մրցավարական հանձնաժողովը բաղկացած է 10 մրցավար և 1 բժշկից **(ընդհանուր քանակը՝ 550 անձ)**, մրցավարական հանձնաժողովների ցուցակը տրամադրվում է Վարչության կողմից:
Ընդ որում.

- Գլխավոր մրցավարական հանձնաժողովի սնունդ՝ 4 օր, 2 գլխավոր մրցավար՝ օրը մեկ անգամյա սնունդ,
- Մրցավարների և բժշկի սնունդ՝ 2 օր, 8 մրցավար և 1 բժիշկ՝ օրը մեկ անգամյա սնունդ:

Սնունդը՝ ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ):
***Ծանոթություն.** Սննդի տրամադրումը կազմակերպվում է տեղերում՝ Կատարողի կողմից:*

2) Համայնքային փուլի ընթացքում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերին մրցանակներով պարգևատրելու համար անհրաժեշտ են.

- **Վկայագիր (հավաստագիր)՝** չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ, (օրինակելի ձևը կցվում է): Տեքստը համաձայնեցնել վարչության հետ: **(ընդհանուր քանակը՝ 150 հատ)**

1-ին տեղը գրված թիմերին մարգագույք

- **Մանկական հեծանիվ՝** կարկասը մետաղական, քաշը՝ 9-10 կգ, անիվների տրամագիծը՝ 12 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրան զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, ետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ, դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ, **յուրաքանչյուր հաստատությանը 1 հատ: (ընդհանուր քանակը՝ 50 հատ)**

- **Գնդակ մանկական՝** կաշվե կամ փոխարինող հումքից, չափսը՝ №3-4, **յուրաքանչյուր հաստատությանը 6 հատ: (ընդհանուր քանակը՝ 300 հատ)**

- **Մարմնամարզական փուչիկ, բռնակով՝** 50-60 սմ տրամագծով, **յուրաքանչյուր հաստատությանը 6 հատ: (ընդհանուր քանակը՝ 300 հատ)**
- **Մարմնամարզական օղակ՝** պլաստմասե, հաստությունը՝ 20մմ, տրամագիծը՝ 70-80 սմ, **յուրաքանչյուր հաստատությանը 6 հատ: (ընդհանուր քանակը՝ 300 հատ)**

2-րդ տեղը գրված թիմերին մարգագույք

- **Մանկական հեծանիվ՝** կարկասը մետաղական, քաշը՝ 9-10 կգ, անիվների տրամագիծը՝ 12 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրան զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, ետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ, դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ, **յուրաքանչյուր հաստատությանը 1 հատ: (ընդհանուր քանակը՝ 50 հատ)**

- **Գնդակ մանկական՝** կաշվե կամ փոխարինող հումքից, չափսը՝ №3-4, **յուրաքանչյուր հաստատությանը 5 հատ: (ընդհանուր քանակը՝ 250 հատ)**

- **Մարմնամարզական փուչիկ, բռնակով՝** 50-60 սմ տրամագծով, **յուրաքանչյուր հաստատությանը 5 հատ: (ընդհանուր քանակը՝ 250 հատ)**

- **Մարմնամարզական օղակ՝** պլաստմասե, հաստությունը՝ 20 մմ, տրամագիծը՝ 70-80 սմ, **յուրաքանչյուր հաստատությանը 5 հատ: (ընդհանուր քանակը՝ 250 հատ)**

3-րդ տեղը գրված թիմերին մարզագույք

- **Մանկական հեծանիվ՝** կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ,անիվների տրամագիծը՝ 12 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրան զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, ետևի անվադողի կից հավասարակշռող 2 փոքր անիվներ, դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ, **յուրաքանչյուր հաստատությանը 1 հատ: (ընդհանուր քանակը՝ 50 հատ)**

- **Գնդակ մանկական՝** կաշվե կամ փոխարինող հումքից, չափսը՝ №3-4, **յուրաքանչյուր հաստատությանը 4 հատ: (ընդհանուր քանակը՝ 200 հատ)**

- **Մարմնամարզական փուչիկ, բռնակով՝** 50-60 սմ տրամագծով, **յուրաքանչյուր հաստատությանը 4 հատ: (ընդհանուր քանակը՝ 200 հատ)**

- **Մարմնամարզական օղակ՝** պլաստմասե, հաստությունը՝ 20մմ, տրամագիծը՝ 70-80 սմ, **յուրաքանչյուր հաստատությանը 4 հատ: (ընդհանուր քանակը՝ 200 հատ)**

2. ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ

Մարզային փուլը անցկացվելու է 2020 թվականի մայիսի 25-ից հունիսի 5-ը՝ բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում՝ 10 օրացուցային օր տևողությամբ (միջոցառման օրը համաձայնեցնել Վարչության հետ):Հայաստանի Հանրապետության 10 մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում (ընդհանուր քանակը՝ 12 տարածաշրջան):

Կատարողը համապատասխան գույքը, վկայագրերը (հավաստագիր), գավթները, մրցավարների սնունդը և հաղթող թիմերին դրամական պարգևը պետք է ապահովի (համաձայն Վարչության կողմից տրված ցուցակի և ժամանակացույցի) << **10** մարզերում, Երևան քաղաքում և Ստեփանակերտ քաղաքում:
Մրցույթի Կանոնակարգի պահանջների համաձայն համապատասխան ցուցակը և ժամանակացույցը Վարչության կողմից Կատարողին է տրամադրվում Մրցույթը սկսելուց ոչ ուշ քան 5 օր առաջ:
Կատարողը կազմում է մրցանակների և գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում դառնում են հանձնման-ընդունման ակտի անբաժանելի մասը:
Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնեցնելով Վարչության հետ:

Մարզային փուլի անցկացման համար անհրաժեշտ է հետևյալը՝

1) Մարզային փուլի ընթացքում մրցավարական հանձնաժողովներին տրամադրվում է սնունդ:
Յուրաքանչյուր տարածաշրջանում մրցավարական հանձնաժողովը բաղկացած է 9 մրցավար և 2 բժշկից **(ընդհանուր քանակը՝ 132 անձ)**, մրցավարական հանձնաժողովների ցուցակը տրամադրվում է Վարչության կողմից:
Ընդ որում.
- Գլխավոր մրցավարական հանձնաժողովի սնունդ՝ 3 օր, 2 գլխավոր մրցավար՝ օրը մեկ անգամյա սնունդ,
- Մրցավարների և բժշկի սնունդ՝ 2 օր, 7 մրցավար և 2 բժիշկ՝ օրը մեկ անգամյա սնունդ:

Սնունդը՝ ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ):

***Ծանոթություն.** *Սննդի տրամադրումը կազմակերպվում է տեղերում՝ Կատարողի կողմից:*

2) Մարզային փուլում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերին պարգևատրելու համար անհրաժեշտ են.
- **Վկայագիր (հավաստագիր)՝** չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ, (օրինակելի ձևը կցվում է): Տեքստը համաձայնեցնել վարչության հետ: **(ընդհանուր քանակը՝ 36 հատ)**

- **Դրամական մրցանակ՝** 1-ին,2-րդ և 3-րդ տեղերը գրված հաստատություններին՝ **(ընդհանուր քանակը՝ 12 տարածաշրջան)**

1-ին տեղ՝ 130.000 ՀՀ դրամ (հարյուր երեսուն հազար), (ներառված հարկերն ու տուրքերը)
2-րդ տեղ՝ 110.000 ՀՀ դրամ (հարյուր տասն հազար), (ներառված հարկերն ու տուրքերը)
3-րդ տեղ՝ 90.000 ՀՀ դրամ (իննսուն հազար), (ներառված հարկերն ու տուրքերը)

- **Գավաթներ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված պատվիրակությունների համար:** Չափսերը՝ 55 սմ, 50 սմ և 45 սմ բարձրությամբ, միանման, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով՝ վրան գրված միջոցառման անվանումը և տեղը, տեքստը համաձայնեցնել Վարչության հետ: **(յուրաքանչյուր չափսից՝ 12 հատ, ընդհանուր քանակը՝ 36 հատ)**

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼ

Եզրափակիչ փուլը անցկացվելու է 2020 թվականի հունիսի 22-ից 23-ը՝ բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում՝ 2 օրացուցային օր տևողությամբ (միջոցառման օրը համաձայնեցնել Վարչության հետ): քաղաք Երևան:
Կատարողը Կանոնակարգի պահանջների համաձայն պետք է ապահովի Մրցույթի անցկացման համար անհրաժեշտ համապատասխան տարածքը, դրա ձևավորումը, գույքը, վկայագրերը (հավաստագիր, շնորհակալագիր), գավթները, ՀՀ 10 մարզերից և Արցախից ժամանած մասնակիցների գիշերակացը, մասնակիցների և մրցավարների սնունդը, մասնակիցների ուղղևորափոխադրում, հաղթող թիմերի դրամական պարգևը և այլն, որը մանրամասն ներկայացվում է ստորև:
Կատարողը կազմում է մրցանակների, այդ թվում՝ դրամական պարգևների, գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում դառնում են հանձնման-ընդունման ակտի անբաժանելի մասը:
Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնեցնելով Վարչության հետ:

Եզրափակիչ փուլի անցկացման համար անհրաժեշտ է հետևյալը՝

1) **Եզրափակիչ փուլում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերին և 4-12-րդ տեղերը գրված թիմերին տրամադրվում է.**

- **վկայագիր (հավաստագիր)՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերին:** Չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ, (օրինակելի ձևը կցվում է): Տեքստը համաձայնեցնել Վարչության հետ: **(ընդհանուր քանակը՝ 3 հատ)**

- **վկայագիր (շնորհակալագիր)՝ 4-12-րդ տեղեր գրված թիմերին:** Չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ, (օրինակելի ձևը կցվում է): Տեքստը համաձայնեցնել Վարչության հետ: **(ընդհանուր քանակը՝ 9 հատ)**

- **վկայագրի (հավաստագրի և շնորհակալագրի) գրպանիկով թղթապանակ, զինանշանով:** Չափսը՝ 32 x 22 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ: Տեքստը համաձայնեցնել Վարչության հետ: **(ընդհանուր քանակը՝ 12 հատ)**

- **Մեդալներ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերի մասնակիցներին:** Չափսը՝ 5 սմ տրամագծով x 3 մմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից: Տեսքը համաձայնեցնել նախարարության Վարչության հետ: **(ընդհանուր քանակը՝ 30 հատ)**

- **Դրամական մրցանակ՝** 1-ին,2-րդ և 3-րդ տեղերը գրված հաստատություններին՝

1-ին տեղ՝ 450.000 ՀՀ դրամ (չորս հարյուր հիսուն հազար), (ներառված հարկերն ու տուրքերը)
2-րդ տեղ՝ 350.000 ՀՀ դրամ (երեք հարյուր հիսուն հազար), (ներառված հարկերն ու տուրքերը)
3-րդ տեղ՝ 250.000 ՀՀ դրամ (երկու հարյուր հիսուն հազար), (ներառված հարկերն ու տուրքերը)

- **Գավաթներ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված պատվիրակության համար:** Չափսերը՝ 65 սմ, 60 սմ և 55 սմ բարձրությամբ, ոսկեգույն, միանման, էբոնիտե պատվանդանով վրան գրված միջոցառման անվանումը և տեղը, տեքստը համաձայնեցնել Վարչության հետ: **(յուրաքանչյուր չափսից՝ 1 հատ, ընդամենը՝ 3 հատ)**

- **Մանկական հեծանիվ՝ 4-12-րդ տեղերը գրաված թիմերին:** Կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ, անիվների տրամագիծը՝ 12 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրան զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, ետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ, դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլասմասյա թևակներ. հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով՝ եզրափակիչ փուլում 4-12-րդ տեղերը գրաված հաստատություններին (մեկական): **(ընդհանուր քանակը՝ 9 հատ)**

- **Գնդակ մանկական՝ 4-12-րդ տեղերը գրաված թիմերին:** Կաշվե կամ փոխարինող հումքից, չափսը՝ №3-4, յուրաքանչյուր հաստատությանը 4 հատ:**(ընդհանուր քանակը՝ 36 հատ)**

- **Մարմնամարզական փուչիկ, բռնակով**՝ 4-12-րդ տեղերը գրաված թիմերին, 50-60 սմ տրամագծով, յուրաքանչյուր հաստատությանը 2 հատ: **(ընդհանուր քանակը՝ 18 հատ)**

- **Նվերներ. մարզահագուստ մասնակից բոլոր երեխաների համար՝** կիսասինթետիկ հումքից, վերնազգեստը կարմիր կամ կապույտ՝ եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով), չափսերը՝ 6-7 տարեկան երեխաների համապատասխան: **(ընդհանուր քանակը՝ 120 հատ)**

2) Եզրափակիչ փուլում Կատարողը ապահովում է.

- **ՀՀ 10 մարզերից և Արցախից ժամանած մասնակիցների գիշերակացը Երևան քաղաքում՝** 3-5 տեղանոց համարներ փափուկ մահճակալներով, ապահոված սանհանգույցներով, տաք և սառը ջրի առկայությամբ: 11 թիմ x 1 գիշեր x 12 մասնակից (յուրաքանչյուր թիմը բաղկացած է երեխաներից՝ 5 տղա և 5 աղջիկ և 2 մեծահասակից՝ տղամարդ կամ կին): **(ընդհանուր քանակը՝ 132 մասնակից)**

- **Մասնակիցների սնունդը՝** 12 թիմ x 2 օր x 12 մասնակից՝ **(ընդհանուր քանակը՝ 144 մասնակից):**
  Սնունդը՝
  նախաճաշ (հաց, պանիր, կարագ, նրբերշիկ, ձու, թթվասեր, թեյ կամ սուրճ),
  ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ),
  ընթրիք (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ):
  ***Ծանոթություն.** Սննդի դրամադրումը կազմակերպվում է տեղերում՝ Կատարողի կողմից:*
- **Մասնակիցների ուղևարափոխադրում՝**
  Անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ): Մասնակիցների տեղափոխումը իրականացվում է ՀՀ մարզկենտրոններից և ԱՀ Ստեփանակերտ քաղաքից՝ քաղաք Երևան և հետադարձ ուղությամբ: 11 թիմ x 12 անձ, **(ընդամենը քանակը՝ 132 անձ):**
- Մասնակիցների տրանսպորտի ապահովում Երևան քաղաքում՝ հյուրանոցից մարզադահլիճ և հակառակ ուղղությամբ 11 թիմ x 2 ուղղություն x 12 անձ և հաստատությունից մարզադահլիճ և հակառակ ողղությամբ 1 թիմ x 2 x 12 **(ընդամենը քանակը՝ 144 անձ):**

3) Եզրափակիչ փուլում մրցավարական հանձնաժողովին տրամադրվում է.

- **Սնունդ**

Մրցավարական հանձնաժողովը բաղկացած է 14 մրցավարից և 2 բժշկից **(ընդհանուր քանակը՝ 16 անձ)**, մրցավարական հանձնաժողովի ցուցակը տրամադրվում է Վարչության կողմից:

Ընդ որում.

- Գլխավոր մրցավարական հանձնաժողովի սնունդ՝ 4 օր, 2 գլխավոր մրցավար՝ օրը մեկ անգամյա սնունդ,
- Մրցավարների և բժշկի սնունդ՝ 2 օր, 12 մրցավար և 2 բժիշկ՝ օրը մեկ անգամյա սնունդ:

Սնունդը՝ ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ):

Ծանոթություն. *Սենդի տրամադրումը կազմակերպվում է տեղերում՝ Կատարողի կողմից:*

- **Բամբակյա կտորից ամառային մարզաշապիկ՝** մրցույթի պատկերանշանով (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով) տեսքը և գույնը նախապես համաձայնեցնելով Վարչության հետ: Մարզաշապիկի չափսերը՝ XXL - 3 հատ, XL - 3 հատ, L - 4 հատ, M - 4 հատ: **(ընդհանուր քանակը՝ 14 հատ)**

- **Արևային գլխարկ (կեպի)՝** տեսքը և գույնը նախապես համաձայնեցնելով Վարչության հետ: **(ընդհանուր քանակը՝ 14 հատ)**

- **Մրցավարներին դրամական պարգև՝ յուրաքանչյուրին 11.000-ական ՀՀ դրամ (տասնմեկ հազար), (ներառված հարկերն ու տուրքերը) (ընդհանուր քանակը՝ 14 մրցավար)**:

4) Եզրափակիչ փուլի մրցույթի անցկացման համար Կատարողը ապահովում է.

- **Մարզադահլիճ Երևան քաղաքում:** Մարզադահլիճը պետք է ունենա առնվազն 24 մետր լայնություն և 36 մետր երկարություն, կահավորված նստատեղերով հանդիսատեսի համար, պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար պատվանդանի առկայությամբ: Մարզադահլիճի և հարակից տարածքի ձևավորում դրոշակներով և պաստառներով, միջոցառման ավարտից հետո ապամոնտաժում և պահեստավորում: Մարզադահլիճի չափսերը, կահավորման տեսքը համաձայնեցնել Վարչության հետ: **(ընդհանուր քանակը՝ 1 օր)** .

- **Ձայնային տեխնիկայի ապահովում մարզադահլիճում:** Բարձրախոսներ՝ ընդհանուր 7 ԿՎ հզորությամբ, 2 հատ միկրոֆոն առանց լարի՝ հեռակառավարվող, 1 հատ միկրոֆոն լարով, միկրոֆոնի տակդիր՝ 3 հատ, ձայնի կառավարման միկշերային վահանակ: **(ընդհանուր քանակը 1 օր)**

- **Հաղորդավարի ծառայություն՝ 1 օր:**

- **Միջոցառման ավարտին ճայթռուկ մարզադահլիճում (հրավառություն): (ընդհանուր քանակը՝ 6 կետից)**

- **Ֆոտո նկարահանում՝ (ընդհանուր քանակը՝ 1 օր)**

- **Գովազդային պաստառ (Բաներ)՝** միջոցառման անվանումով, պատրաստված պոլիէսթերային նյութից, բանների չափսերը՝ 2 մ x 2 մ, 4 եզրերը 15-20 սմ հեռավորությամբ մետաղյա օղերով, բաների տեքստը համաձայնեցնել Վարչության հետ: **(ընդհանուր քանակը՝ 1 հատ)**

- **Թղթե արագակար՝** կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի թերթերի համար:**(ընդհանուր քանակը՝ 10 հատ)**

- **Ֆայլ՝** թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորությամբ: **(ընդհանուր քանակը՝ 50 հատ)**
- **Թղթե կպչուն ժապավեն՝** տնտեսական, մեծ գլանափաթեթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100մ: **(ընդհանուր քանակը՝ 3 հատ)**

- **Թուղթ A4 չափսի 1 (21 x 29.7)՝** չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված,80 գ/մ^2 (210 x 297) մմ: **(ընդհանուր քանակը՝ 2 տուփ)**

- **Թղթապանակ (ռեգիստրատոր)՝** 2 օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի: **(ընդհանուր քանակը՝ 10 հատ)**

- **Գրիչ գնդիկավոր՝** տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափերի:**(ընդհանուր քանակը՝ 10 հատ)**

- **Տրանսպորտային միջոց՝** բեռնատար մեքենա եզրափակիչ փուլի մարզագույքը տեղափոխելու համար: **(ընդհանուր քանակը՝ 1 հատ)**

5) Եզրափակիչ փուլի մրցույթի անցկացման համար Կանոնակարգի ծրագրին համապատասխան Կատարողը ապահովում է անհրաժեշտ մարզագույք՝

- **Պարկեր՝** Երկար պարկ (անջրթափանց կտորից) (պարկի լայնությունը 1 մետր, երկարությունը 3 մետր, երկու եզրերը կարված օղակների համար):**(ընդհանուր քանակը՝ 3 հատ)**
- **Կանգնակներ՝** պլաստմասե, բարձրությունը 70 սմ, վերևի հատվածում դրոշակներով (կարմիր, կապույտ, նարնջագույն գույների): **(ընդհանուր քանակը՝ 15 հատ)**
- **Գուրզեր (բուլավա)՝** 40-50սմ բարձրությամբ, պլաստմասե կամ ռեզինե հումքից, ներքևի հատվածի տրամագիծը 25-30սմ: **(ընդհանուր քանակը՝ 12 հատ)**
- **Փոքր օղակներ՝** պլասմասե, տրամագիծը 30-40 սմ, գունավոր (3-ական՝ կարմիր, կապույր, կանաչ, դեղին, սև): **(ընդհանուր քանակը՝ 15 հատ)**
- **Արգելքներ՝** մետաղական կամ պլասմասե, կանգնակներով, վրայի ծողը առանձնացվող, ծողի երկարությունը 125 սմ, իսկ բարձրությունը՝ շարժական 50սմ-ից մինչև 100սմ: **(ընդհանուր քանակը՝ 3 հատ)**
- **Մանկական հեծանիվ՝** կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ, անիվների տրամագիծը՝ 12 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրան զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, ետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ, դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլասմասյա թևակներ: **(ընդհանուր քանակը՝ 3 հատ)**
- **Կամրջակ թեքահարթակ՝** պատրաստված փայտե կամ նմանատիպ հումքից չկոտրվող, երկարությունը 110 սմ, իսկ լայնությունը 75 սմ, թեքահարթակի տակի մասում ամրացված լինի կլոր փայտ (8-10սմ) թեքությունն ապահովելու համար: **(ընդհանուր քանակը՝ 3 հատ)**
- **Վահանակ օլիմպիական խորհրդանշով՝** լայնությունը՝ 110 սմ, կանգնակների բարձրությունը՝ 65 սմ, վահանակի բարձրությունը՝ 65 սմ, ընդհանուր բարձրությունը՝ 130 սմ, վահանակի վրա ամրացված փոքրիկ կախիչներ, համապատասխան գույնի *(կապույտ, սև, կարմիր, դեղին, կանաչ)*: **(ընդհանուր քանակը՝ 3 հատ)**

***Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը կամ մոդելին հղումներ հանդիպելու դեպքում վեջինց հետո կարդալ «կամ համարժեք» բառերը:**
**** Կատարողը վարչության կողմից ներկայացված ցանկի համապատասխան կազմում է մրցանակների և գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում դառնում են ընդունման և հանձման ակտի անբաժանելի մաս: Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնացնելով վարչության հետ:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
_____ Վ. Գասպարյան	_____ Ս. Ադամյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«27» 03 2020 թ. կնքված
N ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-20/33 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ՀՀ 2020թ պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր, մինչև 30-ը	Ընդամենը
1	92621110-1	սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ				19560000	19560000	19560000	19560000	19560000	19560000	19560000	19560000	19560000	19560000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Ս. Ադամյան
(ստորագրություն)
Կ.Տ